Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ ԱՁ Արմեն Հովհաննիսյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի՝ «Արմեն Հովհաննիսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 04.08.2023 թվականին կայացված 712 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

6. Դատական ծախսերի վերաբերյալ եզրահանգում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի հայցի մերժման պայմաններում Դատարանը գտնում է, որ պետական տուրքի մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. ԱՁ Արմեն Հովհաննիսյանի հայցն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի՝ «Արմեն Հովհաննիսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 04.08.2023 թվականին կայացված 712 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**